Բաժանորդների սպասարկման քաղաքականություն

Բովանդակություն

ԲԱԺԻՆ 1. ՆՊԱՏԱԿԸ 1

ԲԱԺԻՆ 2. ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ 1

Ջրի և էլեկտրաէներգիայի սակագները և վճարները սահմանվում և ընդունվում են Գլենդելի քաղաքային խորհրդի կողմից. ..... **Error! Bookmark not defined.**

ԲԱԺԻՆ 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ ..... **Error! Bookmark not defined.**

A. Անհրաժեշտ տեղեկություն 1

B. Անհատական պատասխանատվություն համատեղ ծառայության համար 2

C. Տանտիրոջ անունով շարունակվող ծառայություն 2

ԲԱԺԻՆ 4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ 3

ԲԱԺԻՆ 5. ԿՐԵԴԻՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ 3

A. Կրեդիտի հաստատում 3

B. Կրեդիտի վերահաստատում 3

ԲԱԺԻՆ 6. Դեպոզիտ 4

A. Դեպոզիտի գումարի չափը 4

B. Դեպոզիտի վճարում 4

C. Դեպոզիտի վերադարձ 4

ԲԱԺԻՆ 7. Հաշվեգրում 5

A. Օգտագործման չափով ծառայություն 5

B. Առանց օգտագործամն չափի ծառայություն 5

C. Մոտավոր հաշիվներ 5

D. Համամասնական հաշիվներ 6

E. Հաշիվներ՝ արևային էներգիայից օգտվող բաժանորդների համար՝ Զուտ էներգիայի հաշվիչի (NEM) ծրագրի շրջանակներում 6

ԲԱԺԻՆ 8. ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄ 7

A. Ե՞րբ են հաշիվները ենթակա վճարման 7

B. Ինչպե՞ս վճարել 7

C. Ուշ վճարման տուրք 8

D. Այլընտրանքային վճարային համաձայնագրեր 8

E. Այլընտրանքային վճարման համաձայնագրեր՝ կարիքավոր պայմաններում գտնվող խմելու ջրի բաժանորդների համար (SB 998) 8
F. Վերադարձված վճարումներ 9
ԲԱԺԻՆ 9. ՍԽԱԼ ՀԱՇԻՎՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ 10
A. Ընդհանուր 10
ԲԱԺԻՆ 10. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ 10
A. Ծառայության դադարեցումը՝ բաժանորդի պահանջով 10
B. Ծառայության դադարեցումը՝ GWP-ի կողմից 11
C. Ծառայության վերականգնում 12
ԲԱԺԻՆ 11. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՈՐԹՈՒՄ/ՉԱՐՏՈՆՎԱԾ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ 13
ԲԱԺԻՆ 12. ՎԻՃԵԼԻ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐԸ 13

ԲԱԺԻՆ 1. ՆՊԱՏԱԿԸ

Գլենդելի Ջրի և էլեկտրականության (GWP) կոմունալ ծառայությունները կարգավորվում են Գլենդելի քաղաքապետարանի քաղաքային օրենսգրքով (Գլենդելի քաղաքային օրենսգիրք), որն ընդունվել և փոփոխվել է Գլենդելի քաղաքային խորհրդի կողմից: GWP-ի քաղաքականությունները, ներառյալ՝ այս «Բաժանորդների սպասարկման քաղաքականությունները», ինչպես նաև՝ կոմունալ տեխնիկական սպասարկման և կառավարմանն առնչվող այլ քաղաքականությունները հաստատվում և փոփոխվում են GWP-ի գլխավոր տնօրենի կողմից:

Բաժանորդների սպասարկման այս քաղաքականությունների նպատակն է սահմանել միասնական ընթացակարգեր՝ GWP-ի բաժանորդներին կոմունալ ծառայություններ մատուցելու համար, որոնք կապահովեն, որ բոլոր քաղաքացիները ստանան հավասար ուշադրություն՝ առանց խտրականության:

ԲԱԺԻՆ 2. ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ

Ջրի և էլեկտրաէներգիայի սակագները և վճարները սահմանվում և ընդունվում են Գլենդելի քաղաքային խորհրդի կողմից:

ԲԱԺԻՆ 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ

Հաշիվ ստեղծելու կամ ակտիվացնելու պահին պետք է որոշվի, թե ով է հաշվի համար պատասխանատու հիմնական դիմող անձը: Հիմնական դիմող անձը պետք է տրամադրի նույնականացման մասին տեղեկություն, որն ընդունելի է GWP-ի համար, և վճարի GWP-ի չվճարված բոլոր վճարումներն ամբողջությամբ, որոնց համար դիմումատուն օրենքով պատասխանատու է: GWP- ն կարող է պահանջել վարձակալության ժամկետի հաստատում:

A. Պահանջվող տեղեկություն

Յուրաքանչյուր դիմումատուից կարող է պահանջվել ներկայացնել հետևյալ տեղեկությունը.

1. Դիմումատուի օրինական անունը
2. Տարածքի գտնվելու վայրը
3. Ծառայության հայտի ներկայացման ամսաթիվը
4. Արդյո՞ք GWP-ն նախկինում ծառայություն է մատուցել դիմումատուին, թե՝ ոչ
5. Նպատակը, որի համար պետք է օգտագործվի ծառայությունը
6. Հասցե, որտեղ պետք է փոստով ուղարկել կամ առաքել հաշիվները
7. Արդյո՞ք դիմումատուն հանդիսանում է տարածքի սեփականատերը, գործակալը կամ վարձակալը

8. Նախընտրած սակագինը, եթե ընտրովի սակագինը հասանելի է

9. Հայտատուի կրեդիտի հաստատման վերաբերյալ տեղեկություն, ներառյալ՝ սոցիալական ապահովության համարը, հարկ վճարողի նույնականացման համարը կամ օրինական նույնականացման այլ ձև:

10. Նմանատիպ այլ տեղեկություններ, որը GWP-ն կարող է ողջամտորեն պահանջել:

GWP- ի կողմից ձեռք բերված դիմումատուի/բաժանորդի վերաբերյալ բոլոր տեղեկությունները պահվում են գաղտնի և ենթակա են ստուգման և բացահայտման՝ ըստ Կալիֆորնիայի կառավարության օրենսգրքի 6254.16 բաժնի:

Բաժանորդներից կպահանջվի տրամադրել որոշակի տեղեկություն՝ որպես գրանցված բաժանորդ ճանաչելու, հաշվի վերաբերյալ տեղեկություն ստանալու և/կամ հաշվի կամ ծառայության մեջ փոփոխությունները կատարելու համար:

B. Անհատական պատասխանատվություն՝ համատեղ ծառայության համար

Եթե երկու կամ ավելի անձինք միանում են մեկ հայտին կամ կոմունալ ծառայությունների պայմանագրին, ապա նրանք համատեղ և խիստ կերպով պատասխանատվություն են կրում՝ ըստ այդ հայտի կամ պայմանագրի, և նրանց հաշիվ է ներկայացվում ՝ ամսական կամ երկամսյա հաշվեգրման միջոցով, որն ուղարկվում է հաշիվը ստանալու համար հայտում նշված անձին:

Անկախ այն փաստից, թե արդյո՞ք GWP- ն ստանում է ծառայության համար համատեղ հայտ, թե՝ ոչ, բոլոր չափահասները, ովքեր զբաղեցնում են տարածքը և օգտվում են ծառայություններից, համատեղ և խիստ կարգով պատասխանատու են օգտագործված կոմունալ ծառայությունների վճարման համար:

C. Տանտիրոջ անունով շարունակվող ծառայություն

Երբ բազմաբնակարան բնակելի տան վարձակալները դիմում են ներկայացնում, որ իրենց ծառայությունը կասեցվի, և նոր վարձակալը չի պահանջում այդ ծառայությունը, ապա կոմունալ ծառայությունը գրանցվում է տանտիրոջ անունով: Հաշվիչ(ներ)ը կնշեն վարձակալի վերջնահաշվարկը, և նույն օրը ծառայությունը կվերագործի տանտիրոջ անունով: Հաշիվը դուրս կգրվի, եթե հաշվիչների վրա լինի էլեկտրաէներգիայի կամ ջրի օգտագործում. դա սովորաբար տեղի է ունենում այն դեպքերում, երբ վարձակալի դուրս գալուց հետո բնակարանը մաքրվում և ցուցադրվում է: Հաշիվը ակտիվ կմնա տանտիրոջ անունով, մինչև նոր վարձակալը գրանցվի ծառայության համար: Եթե հաշիվը կասեցվի՝ չվճարելու համար, ապա այն ավտոմատ կերպով չի մուտքագրվի տանտիրոջ անունով, և տանտերը պետք է զանգահարի՝ ծառայությունը վերականգնելու համար:

Տանտերերը կարող են հրաժարվել շարունակվող ծառայությունից՝ ստորագրելով համաձայնագիր, որը հաստատում է, որ GWP- ն անջատելու է հաշվիչը՝ վարձատուի տեղափոխման պահանջի հիման վրա, և ծառայությունը կրկին չի միացվելու այնքան ժամանակ, քանի դեռ տանտերը կամ նոր վարձակալը չի դիմել դրա համար:

GWP- ն կարող է կասեցնել կամ հրաժարվել դիմումատուին ծառայություններ մատուցելուց, եթե հայտատուի գործողությունները կամ տարածքի պայմանները ցույց են տալիս, որ GWP-ին տրամադրվել է կեղծ, թերի կամ ոչ ճշգրիտ տեղեկություն: GWP- ն պետք է դիմումատուին ներկայացնի այդպիսի մերժման պատճառը: Եթե բաժանորդը հրաժարվում է սոցիալական ապահովության, հարկ վճարողի նույնականացմանը համարները տրամադրելուց կամ չի կարողանում տրամադրել ստուգման ենթակա նույնականացում, ապա կարող է պահանջվել դեպոզիտ՝ ըստ Բաժին 6-ի:

ԲԱԺԻՆ 4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ծառայության համար դիմելիս բաժանորդից գանձվում է նոր հաշվի համար վճար: Եթե բաժանորդը դիմում է, որ ծառայության հաստատումն արագացվի, ապա GWP- ն կարող է իրականացնել այն նույն օրը կամ կանոնավոր աշխատանքային ժամերից հետո՝ այնքանով, որքանով առկա են ռեսուրսները: Նման դեպքերում բաժանորդից գանձվում է լրացուցիչ վճար: Նման վճարների չափը հաստատվում է Գլենդելի քաղաքային խորհրդի պարբերաբար որոշումներով: Ընթացիկ վճարների համար տե՛ս՝
https://www.glendaleca.gov/government/departments/finance/revenue/citywide-fee-schedule

ԲԱԺԻՆ 5. ԿՐԵԴԻՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ

A. Կրեդիտի հաստատում

Յուրաքանչյուր դիմումատուից պահանջվում է հաստատել կրեդիտ, ինչպես նշված է ստորև՝

1. Ներկա և նախորդ բաժանորդների դեպքում՝ անցած 18 ամիսների ընթացքում մեկ տարի և ավել GWP-ի գրանցված բաժանորդ լինելով և պահպանելով գրանցված կոմունալ վճարումներ կատարելը՝ նախքան իրավազանց դառնալը:
2. Նոր բաժանորդների դեպքում՝ կրեդիտի նույնականացման համար անհրաժեշտ տեղեկություն տրամադրելով և վարկային զեկուցման գործակալությունում բավարար վարկանիշ ունենալով՝ ըստ GWP- ի սահմանումների:
3. Ապահովության դեպոզիտ՝ Բաժին 8-ում նշված բոլոր ծառայությունների դիմաց վճարման ապահովման համար դեպոզիտ կատարելու միջոցով: Դեպոզիտները կարող են վճարվել ԱՄՆ արժույթով, չեկով, դրամական օրդերով, գանձապահի չեկով, վարկային քարտով կամ ACH-ով:

B. Կրեդիտի վերահաստատում

Եթե բաժանորդը բավարար կերպով չի հաստատում և պահպանում կրեդիտը՝ սույն փաստաթղթի 8-րդ և 13-րդ Բաժինների համաձայն, ապա կոմունալ վճարումների ապահովության համար կարող է պահանջվել դեպոզիտ:

GWP- ն կարող է նախկինում բաժանորդին մատուցած ծառայության դիմաց չվճարված ցանկացած հաշիվները փոխանցել գոյություն ունեցող կամ նոր ծառայության հաշվին: Փոխանցված մնացորդը ենթակա է Բաժին 8-ում նշված վճարման պայմաններին:

ԲԱԺԻՆ 6. ԴԵՊՈԶԻՏ

Դեպոզիտը պահանջվում է այն դեպքում, երբ բաժանորդն այլապես ի վիճակի չէ բավարար կերպով հաստատել կամ վերահաստատել կրեդիտը, ինչպես սահմանված է Բաժին 5-ում:

A. Դեպոզիտի գումարը

Դեպոզիտը բաժնի բոլոր ծառայությունների համար է, ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետևյալով՝ ջրի, էլեկտրականության, աղբի, կոյուղաջրերի, վտանգավոր թափոնների, արդյունաբերական թափոնների, կոմունալ հարկերի և պետական հավելավճարների՝ ըստ GWP- ի որոշման: Դեպոզիտի գումարը հաշվվում է ըստ հետևյալի՝

1. Ամսական դուրս գրվող հաշիվների համար՝ երկու (2) ամսվա վճարը
2. Երկու ամիսը մեկ դուրս գրվող հաշիվների համար՝ երեք (3) ամսվա վճարը
3. Գլխավոր հաշվարկային հաշիվներ
   a. Ամսական դուրս գրվող հաշիվների համար՝ երեք (3) ամսվա վճարը
   b. Երկու ամիսը մեկ դուրս գրվող հաշիվների համար՝ չորս (4) ամսվա վճարը

Բնակելի տան հաշվի համար ոչ մի դեպոզիտ չպետք է լինի հարյուր դոլարից ($100.00) պակաս, իսկ առևտրային կամ արդյունաբերական հաշվի համար՝ ոչ մի դեպոզիտ չպետք է լինի երկու հարյուր դոլարից ($200.00) պակաս:

B. Դեպոզիտի վճարում

Հաշվարկված դեպոզիտը, բաժնի հայեցողությամբ, կարող է ավելացվել հայտատուի առաջին հաշվին և ենթակա կլինի վճարման՝ սույն քաղաքականության Բաժին 8-ի համաձայն:

C. Դեպոզիտի վերադարձ

1. Մեկ (1) տարի ժամանակին կատարված վճարումներից հետո դեպոզիտը կկիրառվի բաժանորդի հաշվին՝ այդպիսի բաժանորդի վճարման ենթակա ցանկացած այլ չվճարված հաշիվների վճարումից հետո: Այս ենթաբաժնի նկատառումներից ելնելով՝ «ժամանակին վճարումը» վերաբերում է այն վճարումներին, որոնք կատարվել են նախքան կասեցման մասին ծանուցում ստանալը կամ ուշ վճարումը:

2. Հաշիվը փակելուց հետո դեպոզիտը կկիրառվի փակված հաշվի ցանկացած մնացորդի կամ այլ հաշիվների վրա, որը բաժանորդը կարող է ունենալ GWP-ում: Դրանից հետո մնացած ցանկացած կրեդիտ կվերադարձվի բաժանորդին՝ չեկի միջոցով:

ԲԱԺԻՆ 7. ՀԱՇՎԵԳՐՈՒՄ

A. Օգտագործման չափով ծառայություն

1. GWP- ի կողմից կոմունալ ծառայության համար գանձվող վճարները կկատարվեն՝ ըստ դրույքաչափերի, որոնք ընդունվում են Գլենդելի քաղաքային խորհրդի կողմից:

2. Ծառայությունների համար հաշիվները դուրս են գրվում ամսական կամ երկամսյա կտրվածքով՝ ըստ կոմունալի ընտրանքի: Նորմալ պայմաններում հաշիվները հիմնվում են հաշվիչի ընթերցումների վրա:

3. Կոմունալ ծառայության վճարները հաշվվում են՝ ըստ հաշվիչի գրանցումների:

4. Հաշվիչների ընթերցումը կատարվում է՝ ըստ պահանջի՝ կանոնավոր հաշիվների պատրաստման, հաշիվների բացման, փակման և ցանկացած այլ հատուկ հաշվեգրումների համար:

B. Առանց օգտագործման չափի ծառայություններ

1. Առանց օգտագործման չափի կոմունալ ծառայությունների համար GWP- ի կողմից գանձվող վճարները կսահմանվեն՝ Գլենդելի քաղաքային խորհրդի կողմից ընդունված գների համաձայն:

2. Ծառայությունների համար հաշիվները դուրս են գրվում ամսական կամ երկամսյա կտրվածքով՝ ըստ կոմունալի ընտրանքի: Նորմալ պայմաններում հաշիվները հիմնվում են նախկին օգտագործման պատմության վրա, երբ այն կիրառելի է առանց օգտագործման չափի ծառայության համար, կամ՝ հիմնվելով կոմունալ ծառայությունների կողմից որոշված հաշվարկված օգտագործման վրա, երբ հայտնաբերված կամ առանց օգտագործման չափի կոմունալ ծառայությունը հայտնաբերվել է կամ՝ կիրառվել և թույլատրվել է:

3. Օգտագործումը հաշվարկվում է՝ ըստ պահանջի՝ կանոնավոր հաշիվների պատրաստման, հաշիվների բացման, փակման և ցանկացած այլ հատուկ հաշվեգրումների համար:

C. Մոտավոր հաշիվներ

Եթե անսովոր պայմանների կամ վերահսկողությունից դուրս այլ պատճառներով GWP- ն ի վիճակի չէ կարդալ հաշվիչի տվյալները՝ պլանավորված ամսաթվին, ապա GWP- ն կարող է բաժանորդին հաշիվ դուրս գրել հաշվարկային ժամանակահատվածում մոտավոր սպառման համար և կատարել անհրաժեշտ բոլոր ուղղումները, երբ ընթերցումը լինի: Այս նպատակով մոտավոր սպառումը

հաշվարկվում է՝ հաշվի առնելով բաժանորդի նախկին սպառումը, GWP- ի փորձը նույն դասի այլ բաժանորդների հետ և բաժանորդի գործողությունների ընդհանուր բնութագրերը:

D. Հաշիվների համամասնական բաշխում

Բաժանորդի հաշվի օգտագործումը կարող է համամասնորեն բաշխվել՝ հաշիվներ բացելիս և փակելիս, հատուկ հաշվեգրումների և պլանավորված սակագնային փոփոխությունների կանոնավոր հաշիվների ժամանակ: Օգտագործման համամասնորեն բաշխման համար ամենօրյա սպառման գումարը բազմապատկվում է հաշվեգրման ժամանակահատվածում օրերի քանակով և այնուհետև բազմապատկվում համապատասխան տոկոսադրույք(ներ)ով: Կիրառելի հարկերը, միանգամյա վճարները և այլ տուրքերը համամասնորեն բաշխման ենթակա չեն:

E. Հաշիվներ՝ արևային էներգիայից օգտվող բաժանորդների համար՝ զուտ էներգիայի հաշվիչի (NEM) ծրագրի շրջանակներում

1. Բոլոր այն բաժանորդները, որոնց արևային ֆոտովոլտային (PV) համակարգերը միացված են GWP- ին՝ զուտ էներգիայի հաշվիչի (NEM) տոկոսադրույքով, կստանան ամսական կամ երկամսյա կտրվածքով հաշիվներ: Վճարման այն ժամանակահատվածների համար, երբ ֆոտովոլտային համակարգի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի քանակը պակաս է օգտագործված էլեկտրաէներգիայի ընդհանուր քանակից, բաժանորդից գանձվում է նրան մատակարարված էներգիայի, բաժանորդային վճարի և ցանկացած կիրառելի հարկերի և տուրքերի համար: Եթե վճարման ժամանակաշրջանում ֆոտովոլտային համակարգի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի քանակն ավելի շատ է, քան բաժանորդի կողմից օգտագործված էներգիայի ընդհանուր քանակը, ապա բաժանորդից գանձվում է միայն բաժանորդային վճարի և ցանկացած կիրառելի հարկերի և տուրքերի համար:

2. Յուրաքանչյուր տասներկուամսյա ժամանակահատվածի վերջում, եթե իրավասու բաժանորդ-արտադրողի կողմից արտադրված էներգիան տասներկուամսյա ժամկետում գերազանցում է այդ նույն ժամանակահատվածում GWP- ի կողմից մատակարարված էներգիան, ապա իրավասու բաժանորդ-արտադրողը զուտ էլեկտրաէներգիայի արտադրող է: Յուրաքանչյուր տասներկուամսյա ժամանակահատվածի ավարտին զուտ էլեկտրաէներգիայի արտադրող հանդիսացող յուրաքանչյուր բաժանորդ-արտադրող կարող է հաստատապես ընտրել կա՛մ (i) զուտ ավելցուկային էներգիայի փոխհատուցում (ըստ Քաղաքային խորհրդի որոշման և դրանով սահմանված դրույքաչափերի և պայմանների, որոնք պարբերաբար կարող են փոփոխվել); կա՛մ՝ (ii) զուտ ավելցուկային էներգիան՝ որպես կՎտ/ժամ փոխանցել հաջորդ տասներկուամսյա ժամանակահատված

(համաձայն Քաղաքային խորհրդի ընդունած որոշման և դրանում ամրագրված պայմանների, որոնք պարբերաբար կարող են փոփոխվել)։

a. Կուտակված զուտ էներգիայի հաշվիչով բաժանորդների դեպքում՝ տասներկուամսյա ժամանակահատվածում արտադրված ցանկացած ավել կՎտ/ժամ վերափոխվում է զրոյի: Համաձայն նահանգի օրենսդրության՝ NEM ծրագրին մասնակցող կուտակված զուտ էներգիայի հաշվիչով բաժանորդի համար ավել էներգիայի վճար չի կատարվի:

3. Ընտրություն՝ փոխհատուցման կամ կրեդիտի ստացման համար։ Եթե բաժանորդը GWP- ին չի ներկայացրել «Ընտրական ձևը»՝ տրամադրելով իր հաստատված ընտրությունը՝ զուտ ավելցուկային էներգիայի փոխհատուցում կամ կՎտ/ժ-ի կրեդիտ ստանալու համար, ապա բացառությամբ օրենքով սահմանված կարգի՝ ցանկացած դրամական արժեք և զուտ ավելցուկային էներգիայի համար կՎտ/ժ-ի կրեդիտ պետք է վերափոխվի զրոյի՝ հաջորդ տասներկու ամիսների ընթացքում: Բացի այդ, բացառությամբ օրենքով սահմանված կարգի, GWP- ի ցանցին մատակարարված զուտ ավելցուկային էներգիայի համար որևէ բաժանորդ չի վճարվի, եթե բաժանորդը ժամանակին հաստատված ընտրություն չի կատարել՝ ստանալու զուտ ավելցուկային էներգիայի փոխհատուցում՝ զուտ ավելցուկային էներգիայի համար՝ ըստ Քաղաքային խորհրդի կողմից ընդունված որոշման: Բաժանորդը պետք է ընտրական ձևը մեկ անգամ ներկայացնի GWP-ին: Բաժանորդը կարող է տասներկուամսյա ժամկետում ցանկացած ժամանակ ներկայացնել Ընտրության փոփոխված ձևը: GWP- ն հիմք է ընդունելու Ընտրության վերջին ձևը, որը ստացել է մինչ այդ ընթացիկ տասներկուամսյա ժամանակահատվածի դեկտեմբերի 31-ը։

ԲԱԺԻՆ 8. ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄ

A. Երբ են հաշիվները ենթակա վճարման

GWP- ի կողմից դուրս գրված բոլոր կոմունալ ծառայությունների վճարումները պետք է վճարել հաշիվը ներկայացնելուց հետո: Հաշվի ամսաթվից տասնինը (19) օրվա ընթացքում չվճարված հաշիվները կհամարվեն ժամկետը լրացած: Հաշվի ժամկետը լրանալուց հետո GWP- ն կարող է դադարեցնել էլեկտրականության և/կամ ջրի մատակարարման ծառայությունը՝ համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելուց հետո՝ համաձայն Բաժին 10-ի և Կալիֆորնիայի օրենքի:

B. Ինչպե՞ս վճարել

Վճարումները կարող են իրականացվել փոստով, էլեկտրոնային տարբերակով, ավտոմատացված հեռախոսային համակարգի միջոցով կամ GWP գրասենյակներում: Բաժանորդների համար վճարման առավել արդի տարբերակները կարելի է դիտել GlendaleWaterAndPower.com կայքում կամ՝ զանգահարելով GWP- ի կապի և վճարման կենտրոն՝ (855) 550-4497 հեռախոսահամարով:

C. Ուշ վճարման տուրք

Բոլոր ժամկետը լրացած մնացորդ հաշիվները ենթակա են ուշ վճարման տուրքի՝ սկզբնական հաշվի ամսաթվից երեսունութ (38) օր հետո: Ուշ վճարման տուրքը պարբերաբար հաստատվում է Գլենդելի քաղաքային խորհրդի որոշմամբ և գանձվում է՝ որպես հավելում բաժանորդի կողմից վճարման ենթակա այլ գումարների:

D. Այլընտրանքային վճարման համաձայնագրեր

Այլընտրանքային վճարման համաձայնագիրը հասանելի է ցանկացած իրավասու բաժանորդի համար: Բաժանորդները պետք է զանգահարեն (855) 550-4497 հեռախոսահամարով՝ քննարկելու իրավասությունը և ընտրանքները: GWP-ն իրավունք է վերապահում գնահատել համաձայնագրի պայմանները՝ կախված յուրաքանչյուր դեպքից՝ հաշվի առնելով բաժանորդի կոմունալ հաշվի և վճարման պատմությունը: Այլընտրանքային վճարման համաձայնագրերը պետք է կնքվեն նախքան ծառայության ընդհատումը, և ուշ վճարման տույժերը կգնահատվեն՝ Գլենդելի քաղաքային օրենսգրքի համաձայն: Այլընտրանքային վճարման համաձայնագրերը հետևյալն են.

1. Վճարման հետաձգում

   a. Էլեկտրականության հաշիվ – մնացորդի վճարման ժամկետը կարող է երկարաձգվել սկզբնական հաշվի ամսաթվից մինչև 6 շաբաթ:

   b. Ջրի հաշիվ – մնացորդի վճարման ժամկետը կարող է երկարաձգվել սկզբնական հաշվի ամսաթվից մինչև 12 շաբաթ:

2. Այլընտրանքային վճարման ժամանակացույց

   a. Էլեկտրականության հաշիվ – մնացորդի վճարման ժամկետը բաշխվում է ավելի փոքր շաբաթական կամ երկշաբաթյա վճարումների՝ սկզբնական հաշվի ամսաթվից հետո մինչև 6 շաբաթվա ընթացքում:

   b. Ջրի հաշիվ - մնացորդի վճարման ժամկետը բաշխվում է ավելի փոքր շաբաթական կամ երկշաբաթյա վճարումների՝ սկզբնական հաշվի ամսաթվից հետո մինչև 12 շաբաթվա ընթացքում:

E. Այլընտրանքային վճարման համաձայնագրեր՝ կարիքավոր պայմաններում գտնվող խմելու ջրի բաժանորդների համար (SB 998)

Բացի Բաժին 8-ի (Դ) կետում թվարկված այլընտրանքային վճարման համաձայնագրերից, ստորև նկարագրված իրավասու բաժանորդները կարող են պահանջել ամորտիզացիայի 12-ամսյա ծրագիր, որի դեպքում մնացորդը վճարվում է 12-ամսյա ժամկետում՝ ամսական մասնակի վճարումների միջոցով: Իրավասու բաժանորդը պետք է համապատասխանի ամորտիզացիայի ծրագրի պահանջներին և մնա ընթացիկ, քանի որ վճարները հաշվարկվում են յուրաքանչյուր հաջորդող վճարման ժամանակաշրջանում: Բաժանորդը չի կարող պահանջել ամորտիզացիա՝

հետագա չվճարված հաշիվների համար, քանի դեռ ամորտիզացիայի ծրագրի համաձայն կատարում է ժամկետը լրացած վճարումներ: Ամորտիզացիայի ծրագրի պայմաններին չհամապատասխանելը կհանգեցնի ծառայության կասեցմանը: Ամորտիզացիայի ծրագիրը հասանելի է խմելու ջրի այն բաժանորդներին, որոնք բավարարում են պահանջները և կարող են տրամադրել փաստաթղթավորված և վավեր ապացույց՝ թվարկված **ԲՈԼՈՐԻ** համար.

1. Բաժանորդը կամ բաժանորդի վարձակալը GWP-ին է ներկայացնում առաջնային խնամքի մատակարարի (բուժող բժշկի) տեղեկանքը, ինչպես սահմանված է «Բարեկեցության և հաստատությունների մասին օրենսգրքի» 14088-րդ բաժնի (բ) ենթաբաժնի 1-ին պարբերության (A) ենթապարբերության կետով, այն մասին, որ այդ ծառայության կասեցումը հանդիսանում է կյանքին սպառնացող կամ լուրջ սպառնալիք՝ այն բնակչի առողջությանը և անվտանգությանը, որին մատուցվում է այդ ծառայությունը; և

2. Բաժանորդն ապացուցում է, որ ֆինանսապես ի վիճակի չէ վճարել խմելու ջրի ծառայության համար՝ GWP- ի կանոնավոր հաշվեգրման ժամկետում: Բաժանորդը համարվում է ֆինանսապես անվճարունակ՝ խմելու ջրի ծառայության համար՝ քաղաքային և համայնքային ջրային համակարգի բնականոն հաշվեգրման ժամկետում, եթե բաժանորդի տնային տնտեսության ցանկացած անդամ օգտվում է CalWORKs-ից, CalFresh-ից, ընդհանուր օգնությունից, Medi-Cal-ից, լրացուցիչ ապահովության եկամուտներից / նահանգային լրացուցիչ վճարման ծրագրից կամ Կանանց, նորածինների և երեխաների համար Կալիֆորնիայի հատուկ լրացուցիչ սննդի ծրագրից, կամ՝ բաժանորդը հայտարարում է, որ տնային տնտեսության տարեկան եկամուտը աղքատության դաշնային մակարդակի 200 տոկոսից պակաս է; և

3. Բաժանորդը պատրաստ է համաձայնագիր կնքել ամորտիզացիայի, այլընտրանքային վճարման ժամանակացույցի կամ հետաձգված վճարման կամ վճարման պլան կազմելու համար:

Ամորտիզացիայի համար բաժանորդը պետք է դիմում ներկայացնի՝ նախքան ծառայության կասեցումը: Ուշ վճարման տույժերը կգնահատվեն՝ Գլենդելի քաղաքային օրենսգրքի և SB998-ի համաձայն: SB998-ն թույլ է տալիս հրաժարվել մեկ ուշացած վճարից՝ յուրաքանչյուր 12 ամիսը մեկ անգամ՝ իրավասու բաժանորդների համար:

F. Վերադարձված վճարումներ

Վերադարձված վճարումը ստանալուց հետո՝ որպես կոմունալ վճարում կամ այլ գանձումների համար փոխանցում, GWP-ն հաշվի կառնի չվճարված հաշիվը: GWP- ն կգնահատի ֆինանսական հաստատությունից վերադարձված ցանկացած վճարման

ձևի վերադարձված միավորի միջնորդավճարը: Այս վճարի ընթացիկ գումարի չափի համար տե՛ս «Քաղաքային վճարների ժամանակացույցը»: Այս միջնորդավճարը կարող է չկիրառվել, եթե հաստատվի, որ վերադարձված վճարումը բանկային սխալի հետևանք է:
GWP- ն իրավունք է վերապահում ստուգել ցանկացած այն բաժանորդի վճարման միջոցները կամ ձևը (կանխիկ, դրամական օրդեր, գանձապահի չեկ և այլն), ով նախկինում անբավարար միջոցների չեկ է ներկայացրել:

ԲԱԺԻՆ 9. ՍԽԱԼ ՀԱՇԻՎՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

A. Ընդհանուր

1. Երբ ծառայության ցանկացած հաշվի ճշգրտությունը վիճարկվում է, այդ վեճը հետաքննվում է GWP-ի կողմից: Բաժանորդը հաշվի ամսաթվից հետո տասը (10) օր ունի՝ դրա ճշգրտությունը վիճարկելու համար, հակառակ դեպքում՝ հաշիվը համարվում է վճարման ենթակա:

2. Եթե առկա են սպառման գրանցման անճշտություններ, կամ քարտուղարական կամ հաշվիչի սխալները արտացոլող հաշիվներ կամ վիճելի դեպքերում, երբ սպառումը, ամսաթվերը կամ այլ դրույթներ ենթակա են ճշգրիտ որոշման, ապա հաշվի պատշաճ ճշգրտումները պետք է թույլատրվեն գլխավոր կառավարչի կամ նրա լիազորված գործակալի կողմից՝ այն ժամանակահատվածի համար, երբ հաշվիչը գործածվել է և որոշվել է, որ սխալ է, սակայն դա չպետք է գերազանցի վեց (6) ամիս ժամկետը:

3. Եթե սակագների գրաֆիկի կամ այլ դրույթների կիրառման համար պահանջվող սպառումը, ամսաթվերը կամ այլ գործոններ ենթակա չեն ճշգրիտ որոշման կամ կասկածելի են, կամ, եթե կա ծառայության կամ դրույքաչափի կիրառման հետ կապված վիճելի դեպք, GWP- ն այդ գործոնները սահմանում է թեստերով, վերլուծությունների և հարցաքննությունների միջոցով՝ ճշգրտում կատարելու պատշաճ հիմքը որոշելու համար, եթե կան այդպիսիք: Բաժանորդը կարող է բողոքարկել բոլոր ճշգրտումները, ինչպես նկարագրված է Բաժին 12-ում:

ԲԱԺԻՆ 10. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

A. Ծառայության դադարեցումը՝ բաժանորդի պահանջով

Յուրաքանչյուր բաժանորդ պարտավոր է GWP- ին առնվազն մեկ աշխատանքային օր առաջ տեղեկացնել այն մասին, որ ցանկանում է դադարեցնել ջրի կամ էլեկտրականության ծառայությունը: Եթե պահանջվող ամսաթիվը հանգստյան օր կամ արձակուրդ է, ապա կասեցումը տեղի կունենա հաջորդ աշխատանքային օրը:

Բաժանորդը պատասխանատվություն է կրելու մատուցված ծառայության վճարման համար, մինչև GWP-ի կողմից բաժանորդի ծանուցումն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, կամ մինչև այդպիսի ծանուցման մեջ նշված օրը, որը որ ավելի ուշ է:

Երբ այդպիսի ծանուցում չի նեկայացվել, ապա ծառայության համար կպահանջվի վճարել հաշվի տիրոջից, քանի դեռ GWP-ն չի տեղեկացել, որ բաժանորդն ազատել է տարածքը կամ այլ կերպ դադարեցրել է ծառայությունը:

Եթե ծառայության համար նոր հայտ չի ներկայացվել, իսկ հաշվիչը սպասարկում է մեկից ավելի տարածք, և դրանք զբաղեցված են, ապա GWP- ն կընդունի հաշվիչի ցուցմունքը՝ պահանջվող ամսաթվով, և գույքի գրանցված սեփականատերը կդառնա նոր բաժանորդը, այնքան ժամանակ, քանի դեռ նոր դիմումատուն պատասխանատվություն չի վերցրել հաշվի համար:

B. Ծառայության կասեցումը՝ GWP-ի կողմից

1. Հաշիվների չվճարում

Երբ էլեկտրականության ծառայության հաշվի վճարման ժամկետը լրացել է՝ ըստ Բաժին 8-ի, GWP- ն կասեցման մասին ծանուցում կուղարկի փոստով կամ անձամբ:

a. Էլեկտրականության ծառայություն

Բաժանորդի էլեկտրականության ծառայությունը կարող է կասեցվել չվճարման համար, եթե հաշվի սահմանված ժամկետից առնվազն 26 օրվա ընթացքում հաշիվը չի վճարվել: GWP- ն կծանուցի բաժանորդին՝ կասեցումից 48 ժամ առաջ:

b. Ջրի ծառայություն

(1) Բաժանորդի ջրի մատակարարման ծառայությունը կարող է անջատվել չվճարման համար, եթե հաշվի վճարման ենթակա սկզբնական ամսաթվից առնվազն 60 օրվա ընթացքում հաշիվը չի վճարվել: GWP-ն կասեցումից 7 աշխատանքային օր առաջ կտեղեկացնի բաժանորդին՝ հեռախոսով կամ գրավոր ծանուցմամբ:

(2) Եթե նախկինում բաժանորդը որակավորվել է՝ որպես բժշկական կամ ֆինանսական դժվարություններ ունեցող անձ՝ ըստ սույն քաղաքականության Բաժին 8 E -ի՝ նախկինում հաստատված այլընտրանքային վճարման համաձայնագրով, ապա GWP- ն անջատումից 5 աշխատանքային օր առաջ կուղարկի վերջնական ծանուցում՝ ջրի ծառայությունը կասեցնելու մտադրության մասին՝ ծառայություն վճարման պլանում վճարման ենթակա ամսաթվից 60 օր հետո:

c. Գլխավոր հաշվիչով հաշիվներ (Ջուր կամ էլեկտրականություն)

Եթե բազմաբնակարան բնակելի տների սպասարկումը կատարվում է մեկ գլխավոր հաշվիչով, ապա GWP- ն բարեխիղճ ջանք կգործադրի՝ այդ մասին գրավոր ծանուցմամբ տեղեկացնելով բնակիչներին: Հայտարարությունը կտեղադրվի յուրաքանչյուր բնակելի միավորի դռան վրա: Եթե յուրաքանչյուր բնակելի միավորի դռան վրա ծանուցում տեղադրելը ողջամիտ կամ գործնական չլինի, ապա GWP- ն այն կտեղադրի հասանելի ընդհանուր տարածքում: Ծանուցումը կներառի տեղեկություն բնակելի միավորը զբաղեցրած բնակիչների և գրանցված բաժանորդ դառնալու նրանց իրավունքների մասին:

d. Հաստատված կենսական նշանակության օժանդակ սարքավորում ունեցող բաժանորդները

Եթե հաստատված կենսական նշանակության օժանդակ սարքավորում ունեցող բաժանորդի հաշիվը վճարելու ժամկետը լրացել է, ապա կարող է տեղադրվել սահմանափակ սպառման հաշվիչ, մինչև չվճարված մնացորդի վճարումը կատարելը կամ, մինչև այլընտրանքային վճարման համաձայնագիր ունենալը: Սպառումը սահմանափակող հաշվիչը գործելու է այնպես, որ միայն բավարար քանակությամբ էլեկտրական հոսանք թույլատրվի կենսական նշանակության օժանդակ սարքավորումների համար, ինչպես նշված է GWP-ի «Կենսական նշանակության օժանդակ սարքավորումների» դիմումի մեջ: Սպառումը սահմանափակող սարքի տեղադրումից հետո բաժանորդի պարտականությունն է վերահսկել էլեկտրականության օգտագործումը՝ կանխելով սարքը խափանումը, ինչը կարող է հանգեցնել էլեկտրական հոսանքի կորստի: Ձեռքով զրոյացման հնարավորությունը բաժանորդին հնարավորություն կտա վերականգնել էլեկտրական ծառայությունը՝ սարքի խափանման և էլեկտրական հոսանքի կորստի դեպքում: Սկզբնական տեղադրումից հետո բաժանորդը կարող է պահանջել GWP- ի աշխատակիցներին վերականգնել կամ ստուգել սարքը և ամպերաժի մակարդակը:

C. Ծառայության վերականգնում

Եթե բաժանորդի էլեկտրականության կամ ջրի ծառայությունը դադարեցվել է չվճարելու համար, և նրանք կատարել են անհրաժեշտ վճարումը, որպեսզի ծառայությունը վերականգնվի, ապա GWP- ն հնարավորինս արագ կվերականգնի ծառայությունը՝ հեռակա կարգով կամ ձեռքով: Վճարումը կատարելուց առաջ բաժանորդի պարտականությունն է ապահովել, որ բոլոր սարքավորումները, որոնք չպետք է միացված լինեն բաժանորդի բացակայության դեպքում, լի ն ե ն անջատված, օրինակ՝ էլեկտրական վառարանը կամ ջրի դեպքում՝ բոլոր ծորակները պետք է փակ լինեն:

ԲԱԺԻՆ 11. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՈՐԹՈՒՄ/ՉԱՐՏՈՆՎԱԾ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Եթե կասկածվում է ծառայության շորթում կամ ծառայության չարտոնված օգտագործում, ապա GWP-ի աշխատակիցները կուսումնասիրեն և կգնահատեն իրավիճակը և անհրաժեշտության դեպքում՝ կաշխատեն Գլենդելի ոստիկանության բաժնի հետ: Եթե գողությունը կամ չարտոնված օգտագործումը հաստատվի, ապա ծառայությունը կկասեցվի, և բոլոր անցած և ընթացիկ վճարման ենթակա հաշիվները, կիրառելի տուրքերը, լրացուցիչ դեպոզիտները և խարդախության հետ կապված ծախսերը պետք է վճարվեն, նախքան ծառայության վերականգնումը: Ըստ Կալիֆորնիայի օրենսդրության՝ GWP-ն կարող է գործը ուղարկել շրջանի դատախազությանը՝ հնարավոր դատաքննության համար: Որոշմամբ ընդունված ցանկացած վճար կամ տուրք համապատասխանաբար կգանձվի բաժանորդից:

ԲԱԺԻՆ 12. ՎԻՃԵԼԻ ՀԱՇՎԵԳՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Իրենց կոմունալ հաշիվը վիճարկող բաժանորդները պետք է ձեռնարկեն հետևյալ քայլերը.

1. Այն բաժանորդները, ովքեր կարծում են, որ իրենց կոմունալ վճարը սխալ է, պետք է նախ դիմեն Բաժանորդների սպասարկման բաժին՝ հեռախոսով, գրավոր կամ անձամբ՝ հաշվեգրման օրվանից 10 օրվա ընթացքում, և նախաձեռնեն բողոք կամ պահանջեն հաշվի վերաբերյալ ուսումնասիրություն: Կոմունալ ծառայությունները չեն դադարեցվի վիճարկվող հաշիվը չվճարելու համար, մինչև ժամանակին լրացված քննության անցկացման արդյունքների պատասխան ստանալը: GWP- ն կարող է պահանջել, որ համեմատելի ժամանակահատվածի համար միջին հաշվին հավասար չափով գումար՝ որպես դեպոզիտ տրվի GWP-ին, քանի դեռ հետաքննության արդյունքը հայտնի չէ: Դեպոզիտն ըստ անհրաժեշտության և ժամանակին չներկայացնելը նշանակում է բողոքի կամ քննության պահանջի դադարեցում: Հետագա կոմունալ վճարները, որոնք չեն վիճարկվում, պետք է վճարվեն GWP- ին՝ թույլատրված ժամկետում՝ ծառայության դադարեցումը կանխելու համար:

2. Եթե Բաժանորդների սպասարկման բաժնի հետ կապվելուց հետո բաժանորդը կարծում է, որ հաշիվն, այնուամենայնիվ, ճիշտ չէ, բաժանորդը կարող է որոշման օրվանից 10 օրվա ընթացքում կապ հաստատել Բաժանորդների սպասարկման բաժնի հետ՝ հեռախոսով, կամ՝ վիճարկելի հաշվի վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնել Բաժանորդների սպասարկման ծառայության ադմինիստրատորին՝ 141 N. Glendale Ave. 2nd Level, Glendale, CA 91206 հասցեով: Բաժանորդների սպասարկման բաժնի ադմինիստրատորը

կվարի վեճի քննությունը և իր որոշումը գրավոր կերպով կուղարկի բաժանորդին:

3. Եթե Բաժանորդների սպասարկման բաժնի ադմինիստրատորի հետ հաշվի վիճարկման լուծումը գոհացուցիչ չէ, ապա բաժանորդը կարող է պահանջել վերանայում գլխավոր կառավարչի կողմից՝ ադմինիստրատորի որոշումից հետո 10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն ներկայացնելով GWP- ի գլխավոր կառավարչին՝ 141 N. Glendale Ave. 2nd Level, Glendale, CA 91206 հասցեով: Այս գրավոր հայտարարությունը ժամանակին ստանալուց հետո գլխավոր կառավարիչը կորոշի, թե արդյոք քննությունը մանրակրկիտ և լիարժեք է եղել՝ հաշվի շուրջ վիճարկմանն անդրադառնալու համար: Գլխավոր կառավարիչը կկայացնի իր որոշումը և այն գրավոր կփոխանցի բաժանորդին: Եթե բաժանորդը դեռ բավարարված չէ գլխավոր կառավարչի եզրակացությամբ, նա կարող է դիմել Քաղաքային կառավարչի գրասենյակ՝ 613 E. Broadway Street Room 200, Glendale, CA 91206 հասցով: Քաղաքային կառավարիչը կամ կառավարչի կողմից նշանակված անձը կվերանայի և վերջնական որոշում կկայացնի և այն գրավոր կերպով կուղարկի բաժանորդին: